

# ԾՆՈՒՆԴԸ ՎԱՐԱԳՈՒՅՐԻ ԵՏԵՎՈՒՄ

Ավելի քան Գեղեցիկ Ներկայացում

## ❖ Հովսեփ – Վախ

«Եվ Հիսուսի Քրիստոսի ծնունդն այսպես էր. այսինքն նրա մայրը՝ Մարիամը նշանված լինելով Հովսեփին՝ դեռ մինչև նրանց իրար մոտ գալը Մուրբ Հոգիիցը հղացած գտնվեցավ: Եվ նրա մարդը Հովսեփը արդար լինելով, և նրան խայտառակել չուզելով, խորհեց ծածուկ արձակել նրան:

«Եվ մինչդեռ նա մտածում էր այս, ահա Տիրոջ հրեշտակը երազում երևեցավ նրան և ասեց. Հովսեփ՝ Դավիթի որդի, մի վախենար քեզ մոտ առնել քո կին Մարիամին, որովհետև նրանում ծնվածը Մուրբ Հոգիիցն է: Եվ նա որդի կծնի, և նրա անունը Հիսուս դնես. որովհետև նա իր ժողովրդին կփրկի իրանց մեղքերիցը:

«Եվ այս ամենը եղավ որ կատարվի մարգարեի ձեռովը Տերիցն ասվածը որ ասում է. Ահա կույսը կհղանա և որդի կծնի. և նրա անունն Էմանուել կկանչեն. որ թարգմանվում է՝ Աստված մեզ հետ: Եվ Հովսեփը քնիցը զարթնելով այսպես արավ, ինչպես Տիրոջ հրեշտակը հրամայեց իրան. և առավ իր կնիկն իր մոտ: Եվ չգիտեր նրան մինչև որ նա իր անդրանիկ որդին ծնեց, և նրա անունը կոչեց Հիսուս:» Մատթեոս 1:18-25

## ❖ Մարիամ – Անհանգստություն

«Հովսեփն էլ Գալիլեայիցը՝ Նազարեթ քաղաքիցը գնաց Հրեաստան Դավիթի քաղաքն, իր Բեթլեհեմ է կոչվում. որովհետև նա Դավիթի տանիցը և ազգիցն էր. Որ գրվի իր նշանած Մարիամի հետ որ հղի էր:

«Եվ եղավ երբոր նրանք այնտեղ էին. նրա ծնելու օրերը լրացան: Եվ իր անդրանիկ որդին ծնեց, և պատեց խանձարուրներով և մսուրի մեջ դրավ. որովհետև այն իջեվանումը տեղ չկար նրանց համար:» Ղուկաս 2:5-7

## ❖ Պանդոկապան – Զբաղվածություն

«...որովհետև այն իջեվանումը տեղ չկար նրանց համար:» Ղուկաս 2:7

## ❖ Առաջին այցելու – Երկյուղածությամբ լի

«Եվ երբոր տունը մտան, գտան երեխային իր մայր Մարիամի հետ, և ընկնելով երկրպագեցին նրան, և իրանց գանձերը բացին՝ ընծա տվին նրան՝ ոսկի և կնդրուկ և զմուռու:» Մատթեոս 2:11

«Եվ (հովիվները) շտապելով եկան և գտան Մարիամին և Հովսեփին, և երեխային՝ մսուրի մեջ դրած: Եվ երբոր տեսան իմացրին այն բանն, որ այս երեխայի համար ասվեցավ նրանց: Եվ բոլոր լսողները զարմացան այն բաների համար, որ հովիվները նրանց հետ խոսեցան... և հովիվները ետ դառան. Աստծուն փառաբանում և օրհնում էին...» Ղուկաս 2:16-20

Աստված գիտի քո զգացմունքները և  
Նրա պատասխանն է՝  
Հիսուս

Հաջորդ Կիրակի:  
«Որն է սուրբ ծնունդի հատուկ  
նշանակությունը»  
Հովիվ Սարո Խաչիկեան